ՅԱՋԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ «ԿՏՐԻՃՎՈՐԱՑ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1895 թ. լեհահայոց արքեպիսկոպոս Սահակ Սահակյանը (Իսակ Իսակովիչը) հայերեն տասնյակ ձեռագիր հատորներից բաղկացած մի արժեքավոր հավաքածու նվիրեց Վիեննայի Մխիթարյանների մատենադարանին։ Նվիրաբերված գրչագրերի մեջ էր նաև կաշեկազմ մի փոքրիկ գրքույկ, որը գրանցվեց 453 համարի տակ։ Դա ուկրաինական Յազլովեց քաղաքի հայկական գաղութի երիտասարդական կազմակերպության՝ «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունն էր, որը կազմվել էր 1646 թ.։ Հենց նույն՝ 1895 թ., այդ ձեռագրի մանրամասն նկարագրությունը լույս ընծայվեց Հ. Տաշյանի ձեռագրացուցակում։ Փոքրիկ կրճատումով այնտեղ հրապարակվեց նաև կանոնադրության ներածական մասը և վերջում զետեղված հաստատագիրը[1]։ Դա առաջին տեղեկությունն էր Յազլովեցում գոյություն ունեցած հայ երիտասարդական կազմակերպության վերաբերյալ։

Մինչ այդ էշմիածնում լույս տեսնող «Արարատ» հանդեսի խմբագրությունը Լոնդոնում և Մանչեստրում հաջորդության հոգևոր պաշտոն վարած Եսայի վարդապետ Աստվածաարյանից ստացել և «Արարատի» 1889 թ. համարներից մեկում հրատարակել էր Ռումինիայի Բոտոշան, Ռոման և Յաշ քաղաքների հայ «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը՝ հաստատված 1690 թ., էշմիածնի կաթողիկոս Եղիազարի կողմից[2]։ 1896 թ. Գ. Գովրիկյանը Վիեննայում լույս ընծայեց Տրանսիլվանիայի Գեռլա հայաքաղաքի «Ամենասուրբ երրորդության» անունը կրող «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը, որը կազմվել էր 1729 թ.[3]։

Այդ «եղբայրությունները» յուրօրինակ քաղաքային կազմակերպություններ էին, որոնց նպատակն էր փոխադարձ օգնության և օժանդակության հիման վրա համախմբել հայ երիտասարդությանը, նպաստել նրանց հոգևոր և աշխարհիկ դաստիարակությանը։ Նման կազմակերպություններ Հայաստանում գոյություն ունեին շատ վաղ ժամանակներում և, հայրենի այլ սովորությունների ու ավանդույթների հետ միասին, հայ գաղթականների միջոցով, տարվել էին գաղթաշխարհի կենտրոնները։

«Կտրիճվորաց եղբայրությունների» գիտական հետազոտման սկիզբը դրվեց վերջերս, երբ հրապարակվեց ակադ. Լ. Խաչիկյանի «1280 թ. Երզնկայում

---

1 «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1895, էջ 923—924։

2 Կանոնագրութիւն («Արարատ», էշմիածին, 1889, էջ 387—405)։

3 Հ. Գրիգոր Գովրիկեան, Դրանսիլուանիոյ հայոց մետրոպոլիսը կամ նկարագիր Կերլա հայաքաղաքի ի գիր և ի պատկերս, Վիեննա, 1896, էջ 73—91։

կազմակերպված «եղբայրությունը» հոդվածը[4]։ Հենվելով XIII դ. նշանավոր զիտնական և բանաստեղծ Հովհաննես Երզնկացու կողմից Երզնկա քաղաքի «Երիտասարդաց միաբանութեան» համար գրված «Սահմանք և կանոնքի» վրա, Լ. Խաչիկյանը ցույց տվեց, որ այդ միաբանությունը եղել է քաղաքային աշխատավորական երիտասարդական շերտերն ընդգրկող կազմակերպություն, որը կապված չի եղել առևտրի ու արհեստների որևէ ճյուղի հետ և նպատակ է ունեցել պայքարել քաղաքի ֆեոդալական վերնախավի դեմ։ Երզնկայի «եղբայրության» կանոնադրությունը հետազոտողին հիմք է տվել նմանության եզրեր գտնել այդ կազմակերպության և XIII դ. Փոքր Ասիայի քաղաքներում առաջ եկած «Ախի» («եղբայր») կազմակերպությունների միջև, որոնք կանգնած էին ազատության պաշտպանության դիրքերում և պայքարում էին քաղաքների ֆեոդալական տերերի դեմ։ Լ. Խաչիկյանը եկել է այն հետևության, որ «եղբայրությունները» եղել են դեռևս XII դ. սկզբներին և իրենց գոյությունը շարունակել նաև հետագայում[5]։ 1962 թ. հրապարակելով Երզնկայի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը, Լ. Խաչիկյանը ուշադրություն է դարձրել նաև Յազլովեցի եղբայրության կանոնադրության վրա և Երզնկայի կանոնադրությունը բաղդատելով Հ. Տաշյանի ձեռագրացուցակում եղած նյութերի հետ, որոշ ընդհանրություններ է գտել այդ եղբայրությունների միջև։ Ոչ առանց հիմքի նա ենթադրում է, որ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների հայկական գաղութներում եղած եղբայրությունները «ստեղծվել են ոչ թե տեղական ժողովուրդների համանման կազմակերպությունների, այլ միջնադարյան Հայաստանի քաղաքների օրինակով»[6]։

Լեհահայ կենտրոններում գոյություն ունեցած «Կտրիճվորաց եղբայրությունների» հարցը համառոտ շոշափված է նաև Ա. Կարինյանի[7], Ա. Հովհաննիսյանի[8] և Վ. Ոսկանյանի[9] աշխատություններում։ 1963 և 1965 թթ. «Կտրիճվորաց եղբայրություններին» նվիրված մեր հոդվածներում փորձ ենք կատարել ի մի բերելու հայկական գաղութներում գոյություն ունեցած երիտասարդական կազմակերպությունների մասին եղած նյութերը և դրանք բաղդատել Երզնկայի կազմակերպության կանոնների հետ[10]։ Համեմատությունը

4 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73—84)։

5 Նույն տեղում, էջ 80։

6 Լևոն Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.) («Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 367)։

7 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, էջ 72։

8 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, դիրք առաջին, Երևան, 1957, էջ 423։

9 В. К. Восканян, Древняя Русь и Украина в судьбах армян («Исторические связи и дружба армянского и украинского народов», Ереван, 1961, стр. 71).

10 Վ. Ռ. Գրիգորյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 115—126), В. Р. Григорян, К вопросу о «Братствах удальцов» в армянских колониях Западной Украины («Исторические связи и дружба армянского и украинского народов», Киев, 1965, стр. 128—136). Հոդվածը գրելիս հրապարակված նյութերից բացի մեր ձեռքի տակ էր նաև Յազլովեցի «եղբայրության» ձեռա-հ- կանոնադրությունը, որի լուսանկարչական պատճենը Վիեննայից ստաբ։ և ա-ս՝ -որամադրել բան-։ Մնացականյանը։ Տպագրության հ։ -ո հաճելի ..։ սարում խորին շնորհակալություն

մեզ ևս բերեց այն համոզման, որ այդ կազմակերպությունները նմանություններ ունեն թե միմյանց և թե Երզնկայի եղբայրության հետ։

Յազլովեցը պոդոլյան հինավուրց բնակավայրերից է, որի հիմնադրման ժամանակն առայժմ ճշգրտված չէ։ Կարծիք կա, որ այն հիմնել են Ղրիմից գաղթած հայերը, որոնք արդեն 1250 թ. Յազլովեցում եկեղեցի ունեին[11]։ Այս ենթադրությունը, սակայն, չի հաստատվում պատմական սկզբնաղբյուրներով[12]։ Հայերի գաղթը դեպի Յազլովեց եղել է ավելի ուշ, ամենայն հավանականությամբ Կաֆայի անկումից հետո (1475 թ.)։ Յազլովեցում հաստատված հայերը զբաղվում էին առևտրով ու արհեստներով։ Հայերի գաղթը դեպի Յազլովեց խրախուսելու համար քաղաքի տերերը նրանց բազմաթիվ արտոնություններ են շնորհել։ Հայերը ստացել են սեփական օրենքներով ղեկավարվելու իրավունք և ստեղծել իրենց քաղաքային վարչությունը։ Յազլովեցում հայերն ունեին դպրոց, եկեղեցիներ և դատարան։ Հայ արհեստավորները համախմբված էին իրենց համքարություններում, դրանցից զատ կային նաև եղբայրություններ, որոնցից մեկն էլ խնդրո առարկա «Կտրիճվորաց եղբայրությունն» էր։

Կանոնադրության մեջ ոչ մի խոսք չկա «Կտրիճվորաց եղբայրության» հիմնադրման ժամանակի վերաբերյալ։ Ներածության սկզբում հականե-հանվանե թվարկված են Յազլովեցի հայ գաղութի այն ներկայացուցիչները, որոնք կազմել են այդ եղբայրության հոդվածները և ստորագրված ու կնքված վիճակում 1646 թ. փետրվարի 27-ին հաստատման համար ներկայացրել լեհահայոց արքեպիսկոպոսին։ Լվովի հայ արքեպիսկոպոսական աթոռն այդ ժամանակ զբաղեցնում էր տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչը, որն այնքան եռանդուն մասնակցություն ունեցավ լեհահայոց բռնի կաթոլիկացման գործում։ Նա կանոնադրությունը հաստատել է 1658 թ. փետրվարի 10-ին։ Եղբայրությունը, սակայն, գոյություն է ունեցել կանոնադրությունը պաշտոնապես օրինականացվելուց ավելի վաղ։ 1627 թ. սկզբներին, երբ Նիկոլ Թորոսովիչի ուղեկցությամբ Լվովից Կամենեց-Պոդոլսկ գնալու ճանապարհին մի քանի շաբաթով Յազլովեց է ժամանում Մելքիսեդեկ կաթողիկոսը, ի թիվս պաշտոնական այլ անձանց, նրան են ներկայանում նաև քաղաքի հայ կտրիճներն ու նրանց ղեկավարները։ Կաթողիկոսը ծանոթանում է կազմակերպության գործունեությանը և եղբայրությանը տալիս հաստատման ու օրհնանքի գիր։ Ստորև անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ մեջ բերել Մելիքսեդեկ կաթողիկոսի այդ ուշագրավ գրությունը, որը հրատարակել է Ն. Ակինյանը. «Ի տեառնէ տէր Մելքիսէթ կաթողիկոսէ ամենայն Հայոց...։ Եւ ընդ աւրհնութեան ծանիք Եազլովցացիք մեր հոգեւոր որդիք՝ քահանայք և դատաւորք և ժողովուրդ մեծ և փոքր միաբան. տեսա՛ և իմացա՛ որ այս կրտրըճներն և իւրեանց գանձանակն բարի բան է և լաւ. նա իւրեանք եկան սիրով միաբան առ մեզ և խնդրեցին որ մեր բարձր հրամանաւն տայաք նոցա իշխանութիւն ու աւրհնէք թուխթ. ինչպէս երեսփոխանն և վոյթն հանդերձ աղաներովն տուեր են երկա՛ (այսպե՛ս, Ն. Ա.). նա ես այլ այնպէս կու տամ իւրեանց որ երկան քալցնեն ի յաւիտեան. և հնա-

[11] Galicya, jej ziemia, plody i ludy z pism pośmiertnych księdza Franciszka Siarczyńskiego, Dodatek tigodniowy przy „Gazecie Lwowskiej", № 41, dnia 10. Lwów 1857, ст. 107.

[12] Ягнашкевич, Розселення вірменів на Україні в XI—XVIII ст. («Українськи історико-географічний збірник, випуск перший, Київ, 1971, стр. 175).

անձնելով կանոնադրությունը
հայտնել նրան։

ղանդ լինին աղանտուն. բարեխօսութեամբ սուրբ Լուսաւորչին և ամենայն սրբոց խոնարհութեամբ զարդարին և շնորհօք փառաւորին։ Կատարողք հրամանաց մերոց աւրհնին Աստուծոյ և ամենայն սրբոց. նա և ի մէնջ։

Ձեռամբ անարժան Պետրոսիս դրեցաւ թվ. ՌՀԶ. (1627) փետրվար ԻԴ (24) օրն շաբաթ»[13]։

Ինչպես տեսնում ենք, այս օրհնադրի մեջ դրական գնահատական է տրված յազլովեցյան հայ կտրիճների գործունեությանը։ Երևում է, որ այդ կազմակերպությունը գոյություն է ունեցել կաթողիկոսի ժամանելուց առաջ և հաստատված է եղել գաղութի երեսփոխանի և վոյթի կողմից։

Արդ, ի՞նչ ճանապարհով է «Կտրիճվորաց եղբայրությունը» հասել Պոդոլյան։

Լ. Խաչիկյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ դեռևս 1334 թ. Կաֆայում գործել է Կաղուր անունով մի հայ մանկտավագ, այսինքն մանուկների՝ կտրիճների կազմակերպության ավագ, հետևապես հայրենի այլ ավանդությունների հետ մեկտեղ կտրիճների կազմակերպությունը հասել էր նաև Ղրիմ[14]։ Հայտնի է, որ մեծ թվով հայեր Կաֆայի անկումից հետո գաղթեցին Պոդոլյեի կենտրոն Կամենից։ 1522 թ. այդ քաղաքի հայկական ս. Աստվածածին եկեղեցու մատյաններից մեկում արվել է հետևյալ գրանցումը. «Քրիստոս աւրհնէ զմիաբան կտրիճներն. նկարել ետուն զկէս եկեղեցին հանդերձ բոլորովին պատկերքներով...»[15]։ Ուրեմն կտրիճների կազմակերպություն կար նաև այդ գաղութում և այն պետք է անցած լիներ Կաֆայից։ Կտրիճները բավական ազդեցիկ դեր են խաղացել Կամենիցի հայ գաղութի կյանքում. այդ պատճառով նրանց ղեկավար Սարգիս մանկտավագն ընտրվել է դատավոր և 1572—1575 թթ. պարբերաբար մասնակցել դատական նիստերին։ Իսկ մինչ այդ՝ 1567 թ. Սարգիս մանկտավագը մասնակցել է Կամենիցի հայ բնակիչների համար կանոնադրություն (ստատուտ) և արտոնություններ խնդրելու նպատակով լեհաց Սիգիզմունդ Ավգուստ II թագավորի մոտ ուղարկվող հայկական պատվիրակի ֆինանսավորմանը[16]։

Կամենիցի կտրիճները հիշատակվում են նաև XVII դ.։ Ս. Նիկողայոս եկեղեցու հիշատակարանում 1607 թ. ապրիլի 25-ին գրվել է. «Միաբան մանկունք ետուն շինել մեծ և քաղցրահնչիւն զանգակ մի։ Ապա յիշէ 25 անուանս հանդերձ փառաւոր յիշատակօք»[17]։

Յազլովեցի հայերի մասին գրում են, որ նրանք գաղթել են Կաֆայից։ «Ծերք պատմեցին մեզ աւանդութեամբ,— վկայում է Մ. Բժշկյանը,— թէ Քէֆէցի Հայք յՕսմանեանի դաշտէն աստ եկեալ բնակեցան»[18]։ Լեհերեն թարգմանությամբ հրապարակելով Յազլովեցի մասին Բժշկյանի հաղորդած տեղեկությունները, լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչը «յՕսմանեանի դաշտը» նույնացրել է Կամենեց-Պոդոլսկի մոտ գտնվող Օրմյանե գյուղի հետ[19], որը Պո-

13 Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 54—55։

14 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», էջ 79։

15 Մինաս Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., Վենետիկ, 1830, էջ 149։

16 Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական գաղութի արձանագրությունները (16-րդ դ.), Երևան, 1963, էջ 95—96։

17 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 147։

18 Նույն տեղում, էջ 130։

19 S. Barącz, Pamiątki jazłowieckie, Lwow, 1862, էջ 16:

դոլյե գաղթած հայերի առաջին հանգրվանն էր։ Կարելի է կարծել, որ Կաֆայից դուրս եկած և մի որոշ ժամանակ Կամենիցի շրջակայքում ապրած ու հետո Յազլովեցում հաստատված հայ գաղթականներն իրենց կազմակերպությունները պետք է բերած լինեին Կաֆայից։ Հայտնի է, որ Յազլովեցի հայերը հրոչակված էին նաև որպես հմուտ կաշեգործներ։ Ս. Բարոնչը գրում է, որ գաղթելուց հետո հայերը Յազլովեցում «հիմնեցին կաշվի գործարաններ և բուծում էին եղջերավոր անասունների ընտիր հոտեր և ձիեր»[20]։ 1615 թ. իշխան Յան Եժի Ռադզիվիլի տված արտոնագրի հիման վրա հայերն իրավունք ստացան հիմնելու իրենց համքարությունը[21]։ Դա առաջին հերթին վերաբերում էր կաշեգործներին։ Այդ մասնագիտությունն ավանդական էր դարձել հայերի համար, որովհետև Կաֆայում էլ նրանք հայտնի էին որպես կաշվի լավագույն մշակողներ։ Դեռևս XIII դ. սկսած՝ նոտարական արձանագրություններում, 1449 թ. կանոնադրության և հայերեն ձեռագրերի հիշատակարանների մեջ նշված են Կաֆայի մորթեգործ արհեստավորները, որոնք ունեցել են իրենց համքարությունը։ Նրանք նույնիսկ Կաֆայում հատուկ փողոց են զբաղեցրել[22]։ Կաշվի մշակումից բացի նրանք զբաղվել են նաև կոշկակարությամբ[23]։ Բնական է, որ գաղթելով այլ վայրեր, հայ արհեստավորները շարունակում էին զբաղվել իրենց մասնագիտությամբ։ Ըստ երևույթին, Կաֆայից Յազլովեց տեղափոխված հայերը ևս նոր վայրում պահպանել կամ վերականգնել են իրենց արհեստավորական կազմակերպություններն ու հոգևոր եղբայրությունները։

Այսպիսով, Ղրիմ գաղթած և ապա պատմական դեպքերի հարկադրմամբ այնտեղից Պոդոլյե ու այլ վայրեր ցրված հայերը, ի թիվս հայրենի այլ ավանդույթների, իրենց հետ տարել են նաև առօրյա կյանքի դժվարություններին դիմագրավելու գործում շատ պիտանի իրենց կազմակերպությունները, որոնք, բնականաբար, հարմարվելով նոր պայմաններին, պետք է ենթարկվեին համապատասխան փոփոխությունների։

Յազլովեցի հայ «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը, որը հրատարակվում է առաջին անգամ, արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն այդ ուշագրավ կազմակերպության, նրա կառուցվածքի, այլև ողջ գաղութի ղեկավար մարմինների ու առանձին գործիչների վերաբերյալ։ Ինչպես Լվովում[24], այնպես էլ Յազլովեցում երիտասարդների կազմակերպությունը են-

---

[20] Sadok Barącz, Rys dziejow ormianskich, Tarnopol, 1869, էջ 88—89:

[21] Նույն տեղում, էջ 89—90։

[22] Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 197։

[23] Նույն տեղում, էջ 198։

[24] Լվովի հայ ինքնավարության XVII դ. 60—80-ական թվականների արձանագրություններին նվիրված Յա. Դաշկևիչի հոդվածից երևում է, որ այնտեղ ևս եղբայրությունները ենթարկվում էին հայ գաղութի ավագների խորհրդին (Я. Р. Дашкевич, Армянское самоуправление во Львове в 60—80-х гг. XVII в., «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 230)։ Հիշատակելով արձանագրություններում հանդիպող Լվովի հայերի «Անարատ հղության կույս Մարիամի», «Կտրիճվորաց» և «ս. Գրիգորի» մեծահասակների եղբայրությունները, հեղինակը հայտարարում է, որ դրանք առաջացել են ուկրաինական եղբայրությունների ազդեցության ներքո։ Լվովի հայկական եղբայրությունների առաջացման ժամանակը դեռևս ճշգրտված չէ և Դաշկևիչը նմանօրինակ շուտափույթ ենթադրության ոչ մի հիմք չունի։ Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուկրաինական եկեղեցական եղբայրությունները սկսել են տարածվել XVI դ. 80-ական թվականների երկրորդ կեսից, իսկ Լվովի

թարկված է եղել գաղութի ավագների խորհրդին։ Նրա կանոնների մշակմանն ու հաստատմանը մասնակցել են գաղութի ղեկավարներն ու հոգևոր գործիչները։ Կանոնադրությունը հաստատելու համար լվով գնացած պատվիրակների թվում են եղել նաև ավագ քահանա տեր Ներսեսը և ատենադպիր տեր Հակորը։ Քաղաքի վոյթ հիշվում է մահտեսի պարոն Սեֆերի որդի պան Ասվատուրը, որը հետագայում դարձել է եղբայրության ավագներից մեկը, իսկ վոյթ է ընտրվել պան Կարապետը[25]։ Կանոնադրության հոդվածների մշակմանը մասնակցել են նաև «Քառասուն եղբայրների» խորհրդի ղեկավարներ՝ Մինասի որդի պան Հակոբը (մարշալեք), Գասպարի որդի պան Մարկոսը (վոյեվոդա), ինչպես և կտրիճներից՝ Կարապետի որդի պան Սիմեոնը (վոյեվոդա) և Էսերպեքի որդի պան Խրտրը (ստարոստա)։ Թվարկված են նաև գաղութում նշանավոր դեր կատարող այլ անձինք ևս, այդ թվում երեսփոխան պարոն Նիկողայոսը և պան Բաղդասարը («Ի տղայութեանն բան Պաղտասարին»)[26]։

Ինչպես տեսնում ենք, Յազլովեցում եղել է «Քառասուն եղբայրների» խորհուրդ, որը գլխավորել են «մարշալեքն» ու «վոյեվոդան»։ Այդ խորհրդի թվարկված անդամները «պաներ» ու «պարոններ» են, այսինքն՝ պատկանելիս են եղել գաղութի ունևոր խավին, հետևապես գաղութի, ինչպես և «եղբայրության» ղեկավարությունը գտնվելիս է եղել հարուստների ձեռքին, որոնք, բնականա-

---

առաջին ուկրաինական եղբայրության կանոնադրությունը ստեղծվել է 1585 թ. (Я. Д. Ісаевич, Братства на їх роль в развитку української культури XVIII ст., Київ, 1966, էջ 206—207)։ Հայերն այդ քաղաքում հաստատվել են Գալիցա-Վոլինյան իշխանության ժամանակ՝ XIII դ.։ Նրանց հնագույն վանքը, որ կրում էր ս. Աննայի անունը, հիմնադրվել է XIII կամ XIV դդ. (И. П. Крипякевич, К вопросу о начале армянской колонии во Львове, „Исторические связи и дружба армянского и украинского народов", Киев, 1965, стр. 125). Բացի այդ, նրանք հիմնադրել են այլ եկեղեցիներ, որոնցից 1363 թ. կառուցված «Հաճակատար ս. Աստվածածին» եկեղեցին կանգուն է։ Լվովի հայերի մի զգալի մասը գաղթել էր Կաֆայից, բերելով իր ազգային սովորություններն ու կազմակերպությունները։ Պետք է ենթադրել, որ այդ ժամանակներում էլ առաջացել են նրանց եղբայրությունները, բայց որոշակի տեղեկություններ այդ մասին չեն պահպանվել։ Ինչ վերաբերում է Կամենեց-Պոդոլսկին, ապա հայտնի է, որ 1522 թ. այնտեղ գործում էր հայկական «Կտրիճվորաց եղբայրություն», իսկ ուկրաինական առաջին եղբայրությունն այդ քաղաքում, ինչպես պարզել է պրոֆ. Ե. Մեդինսկին, ստեղծվել է 1589 թ. (Проф. Е. И. Медынский, Братские школы Украины и Белоруссии в XVI—XVII вв. и их роль в воссоединении Украины с Россией, 1954, стр. 22). Մենք հակված ենք կարծելու, որ նրա առաջացման պատճառների մեջ ետին պլանի վրա չի եղել նաև նմանօրինակ եղբայրության առկայությունը քաղաքի ուկրաինական թաղամասին սահմանակից հայկական թաղամասում։ Կամենիցի հայերը մշտապես բարեկամական հարաբերությունների մեջ էին իրենց ուկրաինացի հարևանների հետ և չէր կարող պատահել, որ վերջիններս լավատեղյակ չլինեին ինչպես հայոց թաղում կատարված իրադարձություններին, այնպես էլ այնտեղ գոյություն ունեցած հաստատություններին։ Բացառված չէ նաև այն ազդեցությունը, որ իրենց հերթին ունեցել են ուկրաինական հոգևոր եղբայրությունները հայկական եղբայրությունների վրա։ Այդ հարցերը, սակայն, դեռևս կարոտ են համակողմանի քննության։

25 Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 453, էջ 2—3։

26 Նույն տեղում։

բար, թե՛ խորհրդի և թե՛ եղբայրության հեղինակությունն ու հնարավորությունները օգտագործել են իրենց շահերի օգտին։

Կանոնադրության սկզբում տեր Հակոբը ներկայացված է որպես հոգևոր և աշխարհիկ դատաստանների ատենադպիր։ Որ Յազլովեցի հայ գաղութն ուներ իր աշխարհիկ դատարանը, դա վաղուց հայտնի էր դատարանի 1669—1670 և 1672 թթ. կազմված արձանագրություններից, որոնք հայտնաբերել և քաղվածաբար հրատարակել է Ս. Բարոնչը[27], բայց մեզ անհայտ էր այդ քաղաքում հայ հոգևոր դատարանի գոյության փաստը. դրա միակ աղբյուրը սույն կանոնադրության ներածությունն է։

Երզնկայի, Անիի, Վանի, Սուլթանիայի և Կաֆայի եղբայրությունների պահպանված նյութերից հայտնի է, որ դրանք գլխավորել են «մանկտավագները»։ Այդպես են կոչվել նաև եղբայրության ղեկավարները Կամենեց-Պոդոլսկում։ Բոտոշանում, Յաշում և Ռոմանում նրանք կոչվել են «վատահներ», իսկ 1790 թ. հետո, երբ կանոնադրությունը կրկին հաստատվել է և բավականին խմբագրվել, «վատահի» փոխարեն մտցվել է հայկական «պատանեկապետ» կոչումը։ Գեռլայում այն անվանվում էր «պրեֆեկտ», Ռաշկովում՝ «ստարեսդա»։ Յազլովեցում, ինչպես ցույց է տալիս կանոնադրությունը, «եղբայրների» առաջնորդությունը. ստանձնած են եղել «սթարշըյները»։ Դրանցից բացի եղել են նաև տարբեր պարտականություն ունեցող բազմաթիվ պաշտոնյաներ։

Հայտնի է, որ Երզնկայի կտրիճները ժամանակի ընթացքում աստիճանաբար երկրորդական պլան են մղել եկեղեցին ու կրոնական հարցերը։ Այնտեղ «Եղբայրության» մեջ միավորվելու նպատակն է եղել նաև պայքարը բռնակալության դեմ, բայց Յազլովեցում հիմնական շեշտը դրվում է եկեղեցուն հովանավորություն ցույց տալու վրա։ Այստեղ «Կտրիճվորաց եղբայրությունն» ավելի մոտ էր կանգնած եկեղեցուն, և նրա ղեկավարությունը գտնվում էր գաղութի ազդեցիկ մարդկանց և առաջին հերթին վոյթի ձեռքում։ Ինչպե՞ս է պատահել, որ մայր երկրում եկեղեցուց և կրոնից բավականին հեռացած հայ կտրիճները հայրենիքից դուրս կրկին համախմբվել են եկեղեցու շուրջը։ Կարծում ենք, որ հայկական «կտրիճվորաց» կազմակերպությունների մեջ տեղի ունեցած այս էական փոփոխությունը կապված է տեղական պայմանների հետ։ Երբ արտագաղթի հետևանքով ազգային շատ ավանդույթների հետ միասին այդ կազմակերպությունները տարվեցին հեռավոր երկրներ, ապա տեղական պայմանների ազդեցության ներքո որոշ չափով փոխվեց և նրանց բնույթը. դասակարգային ներհակություններին միացավ նաև մի կարևոր խնդիր՝ ազգապահպանման գործը։ Հայտնի է, որ եկեղեցին կարևոր դեր էր խաղում այդ գործում, ուստի եթե հայերն օտար վայրերում, ներկա դեպքում լեհական պետության իշխանության ակ եղած ուկրաինական այդ քաղաքում, կաթոլիկացման և լեհացման անընդհատ աճող սպառնալիքի պայմաններում շարունակում էին համախմբվել նրա շուրջը, օգնել և օժանդակություն ցույց տալ միմյանց, ապա դրանով իսկ նրանք պայքարում էին այն ուժերի դեմ, որոնք ամեն գնով աշխատում էին ապազգայնացնել նրանց։ Բայց ու-

---

[27] S. Barącz, Pamiątki jazłowieckie, էջ 110—111։

ները խիստ անհավասար էին. լեհահայ համայնքն, ի վերջո, ստիպված եղավ ընդունել միությունը կաթոլիկ եկեղեցու հետ, ուստի և «Կտրիճվորաց Եղբայրությունները» ժամանակի ընթացքում սկսում են աստիճանաբար վերածվել զուտ կրոնական կազմակերպությունների։

Յազլովեցի «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը բաղկացած է 32 հոդվածներից (արթիքուլներից), որոնցում հանգամանորեն պարզաբանված են կազմակերպության մեջ ընդգրկված երիտասարդների իրավունքներն ու պարտականությունները։

Եղբայրության անդամ կարող էին լինել դեռևս չամուսնացած երիտասարդները, որոնք ամուսնանալուց հետո մեկ տարի կարող էին մնալ կազմակերպության մեջ, իսկ ապա եղբայրությունից հեռանալն արդեն կախված էր տվյալ անձի ցանկությունից։ Եղբայրությունը, ինչպես Երզնկայում և այլուր, կապված չի եղել արհեստի ու առևտրի որևէ մասնաճյուղի հետ և հետևապես այն չի կարելի նույնացնել համքարական կազմակերպության հետ։ Այն ունեցել է հատուկ գանձանակ, որը գոյացել է «կտրիճների» պարբերական դրամական մուծումներից և զանցանքների դիմաց գանձվող տուգանքներից։ Այդ գանձանակը փաստորեն փոխօգնության դրամարկղ էր, որից առաջին հերթին օգտվել են նյութապես ոչ ապահովված երիտասարդները։ Գանձանակի հետ կապված հարցերը որոշվել են կտրիճների ընդհանուր ժողովներում։

Կանոնադրության № 3 հոդվածի համաձայն՝ կտրիճներն ամեն տարի ընտրել են «տէրութաղներ» (4 հոգի)։ Հետագա շարադրանքից պարզ չէ սրանց պարտականությունները. ըստ երևույթին սրանցից առանձնացվել կամ ընտրվել են ավագները՝ «սթարշրյները», որոնք իրականացրել են կազմակերպության առանձին օղակների ղեկավարությունը։ Իսկ ընդհանուր ղեկավարությունը, ամենայն հավանականությամբ, վերապահված է եղել վոյթին, որը № 19 հոդվածի համաձայն կարող էր կտրիճներին իր հետ արշավի հանել, անհնազանդներին պատժել բանտարկությամբ (№ 28) կամ վտարել եղբայրությունից (№ 27)։

Երզնկայի «Եղբայրության» նման Յազլովեցինն էլ զինվորական կազմակերպության տեսք ուներ։ Կտրիճները պետք է լինեին վերին աստիճանի կարգապահ, անվերապահորեն ենթարկվեին իրենց ավագներին։ Առանց հարգելի պատճառի նրանք իրավունք չունեին բացակայելու հավաքներից ու ժողովներից։ «Հարսնեցի» դեպքում («հարսնեցը» ծագում է լեհերեն «harc»՝ մրցում, մարտ, մենամարտ բառից) ավագ կտրիճները նշանակում էին հավաքի ժամը՝ «սթարշրներ սահաթ նազնաչրդ անեն», և կտրիճները պարտավոր էին ճիշտ ժամին ներկայանալ։ Հակառակ պարագային «հարսնեց խըզմէթ անելուն յետև» ոչ հարգելի պատճառով բացակայողի հարցը քննարկվում էր կտրիճների ընդհանուր ժողովում՝ «ի հոն զիր սուչն տեսնեն»։ Հանցավորը պատժվում էր տուգանքով կամ բանտարկությամբ (№ 10)։

Ժողովների ժամանակ թույլ էր տրվում մտքերի ազատ փոխանակություն։ Հարցերը լուծվում էին քվեարկությամբ։ Եթե որևէ մեկը խանգարեր այդ կարգը՝ «վոթում տրւողին բերնին վրա գայ և զվոթումն աւիրէ», պարտավոր էր առանց առարկության սահմանված տուգանքը վճարել (№ 22)։

Կտրիճներից պահանջվում էր հարգալից վերաբերմունք ունենալ միմյանց նկատմամբ։ Հավաքների ժամանակ նրանք տեղերը զբաղեցնում էին համաձայն իրենց դիրքի՝ «ամէն կտրիճ տէֆթերին կեօրա նստի, ինչպէս որ գրվեր են» (№ 16)։ Ոչ ոք իրավունք չուներ առանց թույլտվության իր տեղը զիջել կամ փոխել ուրիշի հետ (№ 17)։

Կտրիճները պարտավոր էին կարգապահ լինել ամենուր՝ թե՛ եկեղեցում «հայր մեր գալելուն ատեն», և թե՛ խնճույքների ժամանակ։ Եթե որևէ մեկը «սբոքոյնը չի լինայ և հաշարութիւն անէ», ավագներն իրավունք ունեին նրան պատժի ենթարկելու (№ 11)։ Հավաքների կամ «հարսնեցի» ժամանակ անհնազանդ կտրիճներին սկզբում զգուշացումներ էին արվում (մինչև երեք անգամ). երբ նա չէր ուղղվում և «սթարշըներուն խօսք մտիք չանէ ու ոչինչ բռնէ», այդ կտրիճին ավագները կարող էին խիստ պատժի ենթարկել՝ ընդհուպ մինչև եղբայրությունից վտարումը (№ 29)։

Կանոնադրությամբ կարգավորված է նաև հարսանիքները կազմակերպելու հարցը։ Ամուսնացող կտրիճներին գանձանակից օգնություն էր ցույց տրվում։ Նրանք իրենց հերթին պարտավոր էին համապատասխան մուծում կատարել գանձանակ. գումարի չափը կախված էր ամուսնացողի նյութական հնարավորություններից։ Եթե վերջինս աղքատ էր, նրա հարսանիքի ծախսն արվում էր գանձարկղի կամ էլ հենց կարիճների հաշվին, սակայն դա կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե այդ կտրիճը «աղեկ զասլուժիթսա եղեր է» (№ 26)։ Կտրիճները կարող էին իրենց շունևոր ընկերներին ազատել հարսանիքի համար որոշված գումարը մուծելու պարտականությունից (№ 7)։ Հատուկ հոդված կա այն մասին, որ ամուսնացողները նվերներ են տալու ավագ կտրիճներին (№ 8), իսկ վոյթին իրավունք է վերապահված կտրիճների հաշվին հյուրասիրություն կազմակերպել գաղութի ղեկավարների՝ «աղաների» համար (№ 31)։

Կանոնադրությունից երևում է, որ Երզնկայի կտրիճների նման Յազլովեցի հայ պատանիները ևս սիրել են իրենց ժամանակը խնճույքներում կարճել, ուստի և կանոնադրության մեջ այս հարցը հանգամանորեն պարզաբանված է։ Կան հոդվածներ քեֆերն ու հանդեսները կազմակերպված և հաճելի ձևով անցկացնելու մասին։ № 23 հոդվածի համաձայն՝ «Կտրիճվորայք եբոր խօնչան նստին չլինա մէկ կտրիճ մըյ թրով կամ եարաղով գայ նստի, տօ թեկո թանէց խաղալու, բիյալա կոտրելու...»։ Ուրեմն իրենց հեռավոր նախնիների՝ վանեցիների ու երզնկացիների նման Յազլովեցի կտրիճների համար զինված լինելը սովորական էր, ուստի և կանոն է սահմանված այդ կապակցությամբ։

Երբ պահանջվում էր վոյթի հետ միասին ձիով արշավի գնալ քաղաքից դուրս, ավագների հրամանի համաձայն՝ կտրիճները պարտավոր էին անմիջապես իրենց ձիերով և, անտարակույս, զինված կատարելու կարգադրությունը։ Ջենթարկվող կտրիճը «քարանըյ լինա զընտանով հէմ ճուրումով», այսինքն պատժվում էր բանտարկությամբ և տուգանքով (№ 15)։ Եթե արշավից բացակայելու պատճառը ձի չունենալն էր, եղբայրությունը պարտավոր էր ձի ձեռք բերել չունեցողների համար (№ 20)։ № 21 հոդվածը սահմանում է, որ եթե անհրաժեշտ լիներ մասնակցել «կտրիճվորաց ձեռաց տակը եղեալ» եկեղեցիների նորոգման գործին, ավագների հրամանով կտրիճները

պետք է իրենց ձիերով մասնակցեին այդ աշխատանքներին, իսկ պահանջի դեպքում՝ իրենց միջոցներով սայլեր վարձեին։

Հատուկ ուշադրություն է դարձված եկեղեցական ծեսերին կազմակերպված մասնակցելու հարցին։ Սուրբ խաչի տոնի ժամանակ (տարեկան չորս անգամ) կտրիճները պարտավոր էին խոստովանել ու հաղորդվել (№ 4)։ Զատիկի հանդեսներին ներկա չգտնվողները պատժվում էին տուգանքով (№ 18)։ Կտրիճները տարեկան մեկ անգամ, ամռանը, ուխտ էին գնալու «ս. Գրիգոր Լուսավորչին», որի ժամանակ թույլատրվում էր գանձանակի օգտին ժողովրդից նվիրատվություն ընդունել (№ 32)։ Ստ. Ռոշքայի «Ժամանակագրությունից» հայտնի է, որ յազլովեցահայերը քաղաքից դուրս ունեին Գր. Լուսավորչի անունը կրող մի վանք[28] և ուխտագնացությունը, ըստ երևույթին, եղել է դեպի այդ վանքը։

Ի տարբերություն Երզնկայի և Մոլդավահայ գաղութների եղբայրությունների կանոնների, այստեղ ոչ մի խոսք չկա թաղումների վերաբերյալ։ Պետք է ենթադրել, որ բոլոր կարգի միջոցառումների ժամանակ միասնաբար հանդես եկող և միմյանց զորավիգ եղող յազլովցի կտրիճները, անտարակույս, համապատասխան խնամք և օգնություն չեն զլացել իրենց հիվանդ «եղբայրներին» և նրանց մահվան դեպքում, մասնակցել են թաղումներին։

Մոլդավահայ գաղութների երիտասարդների, ինչպես և մեծահասակների եղբայրությունների կանոնադրությունները մշակել է լեհահայ հայտնի գիտնական Ստեփանոս Ռոշքան, որը ձեռքի տակ ունեցել է լեհահայ համանման կազմակերպությունների կանոնադրությունները և օգտվել դրանցից։ Հետևապես, լեհահայ գաղութներում գոյություն ունեցած կանոնադրությունների վերաբերյալ տեղեկություններ կարելի է քաղել նաև այդ կանոնադրություններից։ Բայց պետք է հաշվի առնել, որ Վատիկանում դաստիարակություն ստացած և Պոդոլյեում հոգևոր բարձր պաշտոններ վարած Ս. Ռոշքան իր կազմած կանոնադրություններում գլխավոր շեշտը դրել է երիտասարդության հոգևոր դաստիարակության վրա և նրա կազմած կանոնների մեծ մասը վերաբերում է կրոնական հարցերին։ «Մոլդավիո Հայ պատանեկաց կանոնադրությունը,— կարդում ենք խմբագրության կցած առաջաբանում,— հիշեցնում է մեզ հին սպարտացվոց կանոնները, որոց պատանիները որոշյալ հասակն առնելուց հետո պատկանում էին հասարակության և դաստիարակվում էին հասարակական հաստատության մեջ, բոլորովին ազատ ծնողաց իշխանությունից և ազդեցությունից, նույնը մասամբ երևում է և Մոլդավիո հայ պատանեկաց կանոնների մեջ, ըստ որում Մոլդավիո հայ պատանյակը ժողովի մեջ մտնելուց հետո, բոլորովին ենթարկվում է ժողովի որոշումներին, որոնց դեմ ոչ ծնողքն և ոչ ազգականք նրան պաշտպանելու իրավունք ունեն։ Զանազանությունը նրանումն է, որ սպարտացին ստանում էր զինվորական դաստիարակություն և դառնում էր հայրենյաց քաջ զինվոր, իսկ Մոլդավիայի հայ պատանյակը կրոնական-հասարակական դաստիարակություն էր ստանում, հասարակության ապագա անդամ և լավ քրիստոնյա լինելու համար»[29]։

Այդ զանազանությունը ավելի պակաս է թվում, երբ ծանոթանում ենք յազլովեցյան կտրիճների կանոններին։ Այստեղ արդեն գործ ունենք կիսա-

28 «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք», հրատարակեց Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1904, էջ 171։

29 «Արարատ», 1889, էջ 378—379։

ռազմականացված կազմակերպության հետ, որի խնդիրների մեջ երիտասարդության կրոնական-հասարակական դաստիարակությունն ապահովելուց ոչ պակաս կարևոր էր նրանց կարգ ու կանոնին վարժեցնելու, հրամանատարավարների կարգադրություններին անվերապահորեն ենթարկվելու, անհրաժեշտության դեպքում թշնամու դեմ դուրս գալու գործը։ Հայտնի է, որ Ցազլովեցի հայերը եռանդուն մասնակցություն են ունեցել քաղաքի պաշտպանությանը։ Նրանք ոչ միայն մասնակցել են կռիվներին, այլև իրենց միջոցներով կառուցել պաշտպանական ամրություններ, որոնց մի մասը պահպանվել է մինչև այսօր։ XVII դ. կեսերին քաղաքի պաշտպանությունը վստահված էր հայ վոյթին։ Հատկապես աչքի է ընկել վոյթ Բոգդան Շեֆերովիչը, որը բազմաթիվ հաղթանակներ է տարել քաղաքի վրա հարձակված թուրք-թաթարական հրոսակների նկատմամբ և արժանացել Լեհաստանի ասպետի պատվավոր կոչման[30]։ Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին 1685 թ. հունիսի 6-ին հայ արհեստավորներին մի շարք արտոնություններ շնորհելու վերաբերյալ տված իր հրովարտակում հատուկ շեշտել է հայերի քաջագործությունները նաև Ցազլովեցի պաշտպանության ժամանակ[31]։ Կռվող ուժը հիմնականում երիտասարդներն էին և կարելի է չկասկածել, որ «Կտրիճվորաց եղբայրությունը» կարևոր դեր է խաղացել նրանց մարտական ոգու դաստիարակության գործում։

Ցազլովեցյան «կտրիճների» կանոնադրությունը շարադրված լինելով տեղի հայերի առօրյա խոսակցական լեզվով, օգտակար սկզբնաղբյուր է նաև լեզվաբանական հետազոտությունների համար։ Դժվար չէ նկատել, որ յազլովեցահայերը հաճախ են օգտագործել այլ լեզուներից, գլխավորապես լեհերենից, թուրքերենից ու արաբերենից փոխառյալ բառեր, որոնք երբեմն փոփոխվել ու աղավաղվել են և որոշակի դժվարություն են հարուցում հոդվածների բովանդակությունը ճշտորեն ըմբռնելու գործում։ Դա դյուրացնելու համար բնագրի վերջում տվել ենք փոքրիկ բառարան, որի մեջ, բացառությամբ մի քանի բառերի, բերված է կանոնադրության մեջ հանդիպող օտար բառերի թարգմանությունը։

Կանոնադրության հեղինակները երբեմն մեղանչել են ուղղագրական կանոնների դեմ. միևնույն բառը, հաճախ գրել են տարբեր ձևով, բայց բնագիրը հարազատ ձևով հրապարակելու համար այդ ամենը թողել ենք անփոփոխ։ Միայն վերնագրերում երկու անգամ «արդիքուլը»՝ ուղղել ենք «արթիքուլ», ինչպես դրված է մյուս բոլոր տեղերում։

Ստորև լույս ընծայելով կանոնադրության բնագիրը, անհրաժեշտ ենք գտնում նախապես տալ № 453 ձեռագրի նկարագրությունը՝ բերելով այն Հ. Տաշյանի «Ձեռագրացուցակից»։

Հ. Տաշյանը ձեռագրին տվել է հետևյալ վերնագիրը՝ «Հաստատագիր կանոնադրութեան կտրիճվորաց Եազլովի, 1658», այնուհետև այդ «հաստատագիրը» նկարագրում է այսպես. «Թուղթք 7, մեծություն 30,5×19,5։ Գրություն միասյուն 23,5×15—6։ Տողք 31։ Նյութ թուղթ բարակ և անողորկ։ Կազմ խավաքարտյա կաշեպատ (մեկ կողը բոլորովին ինկած, մյուսն ալ մասամբ կտրված)։ Հանգամանք լավ, բայց վարի եզերքները մաշած։ Գիր նո-

[30] S. Barącz. Zywoty slawnich ormian w Polsce, Lwów, 1856, էջ 303—310։

[31] Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963, էջ 36։

տրրգիր մաքուր։ Զարդագիրք, խորանք և այլն չկան։ Խորագիրերն ամբողջ գլխագրով՝ թղ. 2ա։ Դատարկ թղ. 1բ, 6—7։ Ժամանակ ՌՃԷ (— 1658)։ Դրիչ և այլն Նիկողայոս եպ. Թորոսովիչի քարտուղարանեն, ծայր յուր ստորագրությամբն և կնքովն։ Հիշատակագրությունք թղ. 1ա, կնիք և ստորագրություն՝ թղ. 5բ։ Տեղեկությունք՝ թղ. 1ա «Առաքեաց գեր. Սահակ Սահակեան արքեպ. Էմպէրկի Հայոց՝ նուէր Մխիթ. Մատ. Վիեննոյ, յամին 1895»[32]։

ՅԱՋԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ «ԿՏՐԻՃՎՈՐԱՑ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ*

Նիկողայոս Թորոսենց ողորմութեամբ Աստուծոյ եւ առաքելական սուրբ յաթոռոյս արքեպիսկոպոս Լովա Հայոց քաղաքին, և ամենայն թագաւորութեանն, որ կան բնակեալ հայկազան սեռից, եւ Պողտանաց երկրի Հայոց առաջնորդ։

Ծանուցումն լիցի ձեզ ամենեցուն այս թղթովս մերոյ, եւ որոց պարտ է դիտել յատուկ յատուկ։ Զոր բերեալ են առաջի իմ ի ձեռն Եաղլովցա քաղաքի տէրուդովանը քահանայից, այսինքն տէր Ներսէս աւագ քահանայի և տէր Յակոբ ատենադպրի մեր հոգևոր դատաստանի, նոյնպէս մարմնաւոր դատաստանին դատաւորք , այս են՝ բան Ասվատուր մահտեսի պարոն Սէֆէրին որդւոյն, նա թէն չաս վոյթի նոյն քաղաքի։ Եւ պարոն բան Օհան Վարդևանի որդւոյն, եւ բան Ասվատուր Մսրենց, և այլք եղբարց քառասնից, այս է՝ բան Յակոբ Մինասի որդի՝ մարշալէք, բան Մարկոս Գասբարի որդի՝ նա դէն չաս վոյվոտա։ Եւ կըտրըճներուն վոյվոտայութեանն բան Սիմէոն Կարապետին որդի։ Եւ սդարըսդայութեան բան Խրտըրին էսէրպէքի որդի, կոչեցեալ եղբայրակցութիւն Խաչելութեանն Քրիստոսի։ Արդիքուլներ դրեալ դոցա ձեռաւք դատաստանի, բոտբիսանըլ և մոհրով իւրեանց հաստատեալ և կատարեալ։ Մեք ոչ ինչ տեսաք ապըստամբութիւն ի դոցա, բայց միայն այս, որ ոչ էին յայնժամ նախնիք մեր, որ է առաջնորդք Լովա մայրաքաղաքին, քանզի նոցա է բան և իշխանութիւն տալ և առնուլ, ջընջել և հաստատել։ Բայց այժմ վասն Քրիստոսի և մեր սիրելի ոչխարաց, թէպէտ նոքա նալեժօնցէլ ոչ էին, ետնաք որ հնաղանդեցան և խոնարհութեամբ խնդրեն ի մեզանէ, վերոյ դրեալ քահանայք, դատաւորք, քառասուն եղբարք, կըտրըճվորաք Հայոց Եաղլովցա քաղաքի եկեղեցւոյ, որ այս վլասնըլ թուղթ բոտանը արդիքուլներ, նորոգեմ, և հաստատեմ, և աբրոպովադ կանեմ։ Որ է առաջին թուղթ, մինչև ի բուն խօսք ընդ խօսք դրեալ կա այսպէս։

Եղաւ ի թվականիս Հայոց ՌՂԵ (1646), փետրվարի ամսոյն ԻԷ (27), օրն զշաբաթ։ Ի կաթուղիկոսութեան տեառն տէր Փիլիպոսի հայրապետին, եւ քահանայութեան տէր Ներսէսին, եւ երեսփոխանութեան պարոն Նիկողայոսին, եւ վոյթութեան բան Կարապետին, ի տղայութեան բան Պաղտասարին, բան Օհանին, բան Մինասին, բան Խաչատուրին, բան էսէրպէկյին, բան Մարտիրոսին և այլոցն։

---

32 Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 923։

* Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 453։

Ասորվան թորային դիմաց զուբէլնըյ էկան ըէրսօնալիդէր սթարշը կըտրըճվորայք գանծանակին, նայիմենե բան Ասվատուր որդի բան Մինասին, և բան Ասվատուր որդի բան Սէֆէրին, զէպրանըյ եղբայրք հաւասար գանծանակին, բոտատ արին մեզի արդիքուլներ տօբորոնտքու պիտվական իրենչ մէջ ուխֆալոնըյ ու գրված, տեաչէկօ մեզի զվըշմեանովանըյ աղաներուն, խնդրեցին, որ ագդաներով բրավնրյ աբրօպօվաթ անեմք և հաստատեմք։ Որ արթիքուլներն վերո գրեալ աղաներս կարդալ տրանք և իմացանք, որ տօրորոնթքու բօթրէպնրյ է ուալուշնրյ։

Այս է օզտոպայի մեր սուրբ եկեղեցւոյս ուբորոնտէքին քաղքին, վասն այնտեղ տրանք իւրեանց խնդրքին և զիւրեանց գանձանակին սահմանեալ արթիքուլներն հաստատ պահեցանք։ Եւ մեր բիսարին ագդան գրել հրամայեցաք, որ արթիքուլներն խօսք ի խօսաց և բան ի բանէն այսպէս։

ԱՌԱՋԻՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Նախ և առաջի. յորժամ ոք ի նոցանէ կարգվի, պարտ է, որ երթա առաջի կըտրըճվորաց՝ շնորքըլէ ամենեցուն, և տա քանզանակի Բ (2) ախ բոխոտնայի քին։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Ով ոք չըլինի կտրըճվորաց պատարագի եղբաւրտաց միջէն, մէկ հրոշ տալու է ճուրում գանծանակի։

ԵՐՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Տէբութադներ պարտ է, որ ընտրեն ամէն տարի, աւելի չէ, միայն չորս։

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Յորժամ լինի տօն սուրբ խաչին, որ լինի տարի Դ (4) անգամ, առաջին՝ Վերացման սուրբ խաչ, Բ (2)րդ՝ Վարագայ խաչ, Գ (3)րդ Գիւտ խաչ, Դ (4)րդ՝ Երևման խաչ, ամէնն կտրըճվորաք խոստովանին և հաղորդվին մարմնոյ և արեան տեառն, պաշխա զատկին կամ աղուհացից։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Այս պատարագներն, որք են կտրրճվորաց շաբաթ մէկ անգամ կատարի, աւուրն ուրբաթ սուրբ խաչ խորանին առջև, ժամատուն յաջդիհլէն կընտոց ժամ, որ տված է նոցա ի մեղանէն, որպէս աթոռակալ առաջնորդէն, մէկ ուրբաթ ննջեցելոց և երկուսում ուրբաթ վասն կենդանեաց մատուցի։

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Մէկ կըտրիճ մըյ մեր գանծանակէն դէ օտար քաղաքն նշանվի և գայ Եազլովցայ հարսնիկ անէ, նա կտրիճվորայք գանծանակին բովինեն լինան զամէն բուլուկան այն կտրիճին տեսնելու կատարեալ, որպէս սահմանք է։

Նոյնպէս այն կտրիճն հարսնիք անողն բովինեն լինայ ինչպէս ամէն կտրիճն այս քաղաքին, որն որ աղջիկն կառնու, զամեն տօխօթ ու կելուր տալու գանծանակին։ Հէմ կտրրճվորաց նոյնպէս և զիսնչան ամէն վէտլուկ զվրշայու ամէն փեսացուն իր ուժին և իր հալին կօրա տայ, բայց կտրիճվորայք տեսնեն զհալն այն կտրիճին հարսնիք անողին պաշխշ անելու իրեն, այն իրենց կամքն լինայ։

ԵՐԹՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Նոյնպէս հարսնիք անող կտրիճն գանծանակին կտրիճվորաց բովինեն լինա օր մը առաջ իմաց անելու. հեմ զամէն բան տեսնելու, տօթեկօ զկելուր գանծանակին նագնաչօնրյ, թո եստ ԺԲ (12) ղլոթը աւելի չառնեն, թըլքօ կըտրիճվորայք տեսնեն զհարսնիք անօղն, հալին կեօրա առնուն, աթըշ վոլնրյ լինայ իրենց առնելու ու պաշխելու։

ՈՒԹՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Պսակ անօղ կտրիճն կտրիճվորաց գանծանակին զխօնչան բովինեն լինայ պսակին յետև զարազ շթարշիյին տունն խրկելու, թո եսդ տասն հաւ խօրված, ու տասն կարմեց մեղրը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօ դէկօ Ա (1) կտրիճ մը մեր գանծանակին, թէ օր օտար քաղաք կարգրվի և յետոյ գայ Եազլովցա, նա այնպիսի կտրիճն բովինեն չի լինայ Ա (1) խօնչա մըյ տալու, թըլքօ թէ օր ուզենայ տալու այն իրեն շաղաւաթն է, ալէ ճորովի չէ։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Սթարշը կտրիճվորայքն հարսնեց զաբրոշօնրյ լինան հաւասար հետվըներն ծառայութեանն, նա կտրիճվորաց սթարշըներ սահաթ նագնաչրդ անեն, բովինեն լինան ամէն կտրիճվորայք այն սահաթին գտնրվելու, որ սահաթին նագնաչօնրյ է, ու որ կտրիճն տուն լինա ու այն սահթին չը գտնրվի, նա այնպիսի կտրիճն հարսնեց խրզմէթ անելուն յետև, ձայն տան ուր տեղ որ գանծանակով և հաւասար եղբայրք նստաց լինան, նա ի հոն զիր սուչն տեսնեն, զա նեէբոսլուշենսթվո ու զճուրում առնուն, նե օտ խոծոնց՝ հրոշ քառսուն, տօ թէկօ քազնայով քարանը լինա այն կտրիճն։

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Թաքժէ թըշ, յերբ կտրիճվորայք հաւասար նստին, թէ ի սխացքան և ի հարսանիք ձեներն, կամ հայր մեր գալելուն ատեն, և կամ ի խօնչային ատեն, որ կտրիճ սբոքօյնրյ չի լինայ ու հաշարութիւն անէ այնպիսի տեղրանք, ինչպէս վեր գրվել է, թէ ձեռօք և թէ խօսօք, նա այնպիսի կտրիճն բոսբրավեէ զարազ քարաթ անեն սթարշըներ վենզենօվ հէմ ճուրումով։

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Նոյնպէս եթէ սխալքա լինա կտրիճվորացն, նա այն օր որ կտրիճն քաղաք լինայ ու գանծանակ սխալքա չքայ, այնպիսի կտրիճն քարաթ անեն քազնայով ու ճուրումով։

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօթէկօ բրէլոժոնըյ սթարշըներուն էրք լինա, թէ որ մէկ կտրիճ մըյ ղատաթ անէ խօսք հարկեց դիհաց օզկա կտրիճին, թէ խօսօք և կամ ձեռօք, այնպիսի կտրիճն քառանըյ լինայ վենզենով հէմ ճուրումով։

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Կըտրիճ մըյ սխալքայի ատեն գայ ու սընտուկ բաց լինայ ու օզկա կտրիճովն, վրմօվեօնըյ չի լինայ, այնպիսի կտրիճին ճորում լինա Ա(1) հրոշ։

ՀԻՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Սթարշը կտրիճվորայք բովինեն լինան սխալքայի ատեն օգնայմիթ անելու, թէ որ գանծանակին կամ սընտկին պակասութիւն լինայ, որ այնպիսի բան մէկ մէկ վարէն բամլօթշէմու վոթում անեն և տեսնեն սթարշիներն, որ դիհն որ շատ են, նոցա քովն մնան։

ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Թաքժէ թըշ յեփոր կտրիճներն նստաց լինան, թէ սխալքային, թէ ի խոնչային, նա ամէն կտրիճ տէֆթէրին կեօրա նստի, ինչպէս որ գրվեր են, ու մէկ կտրիճ մը հարկիք նայի ու վերի տեղն նստի, բէզ բոզվոլեէնեա եղբօր ու նստի իրեն տեղն, այնպիսի կըտրիճին ճուրում լինա Ը(9) հրոշ։

ԵԻԹՆԵՐՈՐԴՏԱՍԱՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Նոյնպէս որ կտրիճն զիր տեղն օզկա կտրիճին առանց գիտութեան սգարշրյներուն որ մէկ մէկի յետ առուտուր անեն, նայ այն վերի գրաց ճուրումն այն կտրիճն տայ։

ՈՒԹՆԵՐՈՐԴՏԱՍԱՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօթէկո զատկին Բ(2) շաբթի քաղաք եղեալ կտրիճվորայք գանծանակին բովենեն լինան ամէնքն հաւասար սթարշըներուն յետ հայր մեր գալելու, ինչ ատեն որ սթարշըներն նազնաչրգ անեն, ու որ տեղն որ նազնաչօնըյ լինայ՝ այն տեղն գտնըվին, ու որ կտրիճն այն սահթին չգտնվի, որ կտրիճվորայք քահանայից տներն գալեն ու ապայ գայ կտրիճ մըյ, այնպիսի կտրիճին ճուրում լինայ հրոշ ԻԴ(24)։ Ու եթէ կտրիճ մը իրեն սբրավան լեկալէ ունենայ ու գայ որ պարոն երեսփոխան և բան վոյթին տներն գալեն, ու խալբսին ու յետոյ գայ, այնպիսի կտրիճն ճուրում տայ մէկ զօլոթիյ։

ԻՆՆԵՐՈՐԴԱՍԱՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Քանծանագին գրված կտրիճներն զա օպվելչենեմ բան վոյթին մէ. նաքազանըյ սթարշը կտրիճներուն, զաբիլնօն սբրավային ձիաւոր ելլելու, բան վոյթին յետ, թէ դաշտ և կամ պարոնին դիմաց, սթարշըներ բողքազաթ անեն, փոքրաւոր աղբօրն մէկ պատճառ մըյ կամ վրմօվա չդնէ, թըլթօ զարազ երթա ու ամենուն դէմ պէհ անէ, որ հատիր լինան, ու թէ այն մլօտշըյ եղբայր հակառակ լինա կամ նեէբօսլուշնըյ ու ասէ, թէ չեմ երթայր, թէ թող օզկան երթայ, նա այնպիսի կտրիճն քարանըյ լինա զընտանով հէմ ճուրումով։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօ թէկօ, որ կտրիճին ասեն ելլելու, ու այն կտրիճն չելլէ ու նեէբօսլուշնըյ լինա, կամ թէ ասէ՝ բան ունիմ ու չգայ խնդրվի սթարշըներուն մէ, այնպիսի կտրիճն քարանըյ լինայ քազնայով և ճուրումով գանծանակին, ու թէ ձի չունենա, բովենենէ ձի իրեն վարձելուր

ՔՍԱՆԵԻՄԷԿ ԱՐԹԻՔՈՒԼ

Թաքժէ թըշ գանծանակին կտրիճվորաց ձեռաց տակը եղեալ եկեղեցիք բօթրէպա լինա տօպուտօվանեա կամ քար կրելու, բովինեն լինա ամէն հաւասար զարօսքազանեմ սթարշըյներուն իրենց ձիաներովն այնպիսի բան տեսնելու կամ կրելու, որ կտրիճն ձի չունենա ու այնպիսի բան չանէ, նա սթարշըյներն բողքազաթ անեն, որն որ ձի չունի, ունեցողն ձի տայ իրեն, որ այսպիսի բան կատար լինայ։ Նոյնպէս ձի ունենան կամ չունենան, վէտլուկ բօթրէպըյ ժամուն որ լինա մէկ կտրիճով կամ երկուսով բան տեսնելու։ Թէտը սթարշըյներ տեսանեն վէտլուկ բօթրէպըյ ժամուն, որ զամէն կտրիճվորայք թուրպօվաթ չանեն կամ ճամբէն մընացընեն և կամ իւրեանց բաներուն թէտը բովինեն լինան ֆուրման վարձելու, որ ժամուն բան կատարվի։ Եբոր վքուբեէ հաւասար կտրիճվորայք նստին, բովինեն լինան սթարշըյներուն այնպիսի խարճն դարձնելու, վչասնեէ իրենց քովէն ինչ որ մարդու վրայ գայ ու թէ կտրիճի մըյ բողքազաթ անեն այսպիսի բօթրէպային ու սթարշըներուն խօսք մըտիք չանէ, կամ հակառակ լինայ ու այնպիսի խարճն չտայ կտրիճվորաց պէս, այն նեէբօսլուշնըյ կտրիճն ճուրում տայ հինդ ֆունդ մում։

ՔՍԱՆԵԻԵՐԿՈՒ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօ թէկօ թէ լինի սխացքան կամ թէ խօնչան և կամ ուր և իցէ, որ հաւասար վքուբեէ նստաց լինան, ինչպէս որ սահմանքն է, հարցնէ սթարշըյ բամլօտշէմու վօթում, հարցընելուն ատեն ամէն կտրիճն զիւր գիտածն ասէ, թէ օզկա կտրիճն օրթալըխէն ելլէ ու այն վոթում տըւողին բերնին վրա գայ ու զվօթումն աւիրէ, այնպիսի կտրիճն ճուրում լինա հրոշ Ը(8) ու այն վոթում տըւողն սքարկա չանէ, այն ճուրումն ինքն տայ։

ՔՍԱՆԵԻԵՐԵՔ ԱՐԹԻՔՈՒԼ

Կտրիճվորայք եբոր խօնչան նստին, չլինա մէկ կտրիճ մըյ թրով կամ եարաղով գայ նստի, տօ թէկօ թանէց խաղալու, բիյալա կոտրելու, թէ որ

բեալա կտրիճ մը կոտրէ, բովինեն լինա զարազ վճարելու, ինչպէս որ սթարշրյ նաքազաթ անէ ու նստած տեղն հարկևոր ու օպրշայնեէ, մէկ կտրիճ մրչ չերթայ, ինչ օր զսթարշրյներն չուղարկեն։

ՔՍԱՆԵՒԶՈՐՍ ԱՐԹԻՔՈՒԼ

Կտրիճ մրյ, որ գանծանակին եղբայր չլինա ու գանծանակին մէջ գրված չլինայ և կամենայ հարսանիք անելու, այնպիսի կտրիճն խրզմաթ չտեսնուն ու զպսակն քահանա, որ վեքիլ է արքեպիսկոպոսին և երեսփոխանին խոսոք զաթրիմաթ անեն մինչև հաշտուին։

ՔՍԱՆԵՒՀԻՆԳ ԱՐԹԻՔՈՒԼ

Կրտրիճ մրյ կարգրվելուն յետև բովինեն լինա տարի մրյ հարսնեց յետև գանծանակին խրզմաթ անելու ու տարուն յետև վոլնրյ է իրեն ելնելու ու չելելու։

ՔՍԱՆԵՒՎԵՑ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօ թէկօ կտրիճ մրյ նրշանած լինայ ու թէզով հարսնիք անէ, տարումրյ կամ որպէս գրած է, ուբոտուբատլրյ, լինայ կամ աղքատ, այնպիսի կտրիճին խրզմաթրյ տեսնեն, թէ որ աղէկ զասլուժիթսեա եղեր է, բովինեն լինան կտրիճվորայք իրեն գանծանակին կելուր պաշխելու, ի օվշէմ իրենց քովէն պաշխելու կամ գանծանակէն տալու։

ՔՍԱՆԵՒԵՕԹՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Կտրիճ մրյ, որ սուչանէ կտրիճվորաց և իւրեանց հակառակ լինա, բոզովանեն զինքն բան վոյթին, որ այնպիսի կտրիճին հախէն գայ։ Ու բովինեն լինայ այն կտրիճն գանծանակին նաքլատն գարձընելու և գանծանակին ճուրում տալու սուչի կեօրայ։

ՔՍԱՆԵՒՈՒԹ ԱՐԹԻՔՈՒԼ

Այս հաստատեալ արթիքուլներ պիտվականէ վասն անհնազանդ կտրիճվորաց համար։ Այս է, որ կտրիճ մրյ սուչ անէ և եղբայրք հաւասար նստին ու այն կտրիճին սուչն տեսնուն ու իր սուչի կեօրա օպվինեօնը անեն, ամէն հաւասար իւրեանց մեծաւորքն հանդերձ և յուղարկեն զինքն վենզենեէ հարկեց տակ և նա նեէբոսլուշնրյ ու հակառակ լինա և ոչ երթայ, ու ելլէ երթայ սֆոյեօն վօլեօն, տլեաչէկօ զայսպիսի կտրիճն բոզով անեն բան վոյթին, որ իւր սուչին կեօրա զինքն բան վոյթ քարատ անէ, այս է քաղնայով կոպղաքին տակրյ, մինչև որ քեֆիլ տայ իրեն համար, ապա թէ լինա վօլնրյ, յետոյ գայ սթարշիյ կտրիճվորայք խնդրէ և գանծանակին ճուրում տայ։

ՔՍԱՆԵՒԻՆՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Թաքժէ թրշ սխացքայի ատեն և թէ ի հարսնեց կամ ի խանչային ուր տեղ որ բաստ գայ, այս է որ լինա մէկ անհնազանդ նեէբոպուշնրյ կտրիճ

մըյ, որ զինքն սթարշըներ նաբոմինադ անեն մէկ մըյ կամ Բ (2), կամ Գ (3) ու այն նեէբոսլուշնըյ կտրիճ սթարշըներուն խօսք մտիք չանէ ու ոչինչ ըռնէ, տլեաչէկօ սթարշըներ էրք ունենան այապիսի նեէրոսլուշնըյին սուչն տեսնելու և իր սուչին կեօրա զինքն քարաթ անելու, այնպէս որ իրեանց միջէն զինքն վրբիսաթ անեն, որ գանծանակին մէջ եղեալ կտրըճվորայք բոկորշենէ իրմէն չառնուն։

ԵՐԵՍՈՒՆ ԱՐԹԻՔՈՒԼ

Նա օսթաթէք զայս ալ վարօվաթ կանեմք եբոր ըոքօվըյ սթարշըներ չկենան, բօրօչոնըյ կտրիճվորայք սթարշըյ վաժիցսա չլինան մէկ կտրիճ մըյ գանծանակին մէջ վրբիսաթ անելու, թըլքո այնպէս կտրիճ բրինեաթ անեն, քորուչեօնըյ սթարշըներ, որ կարիճ հարսնիք թէզով պիտի անէ։

ԵՐԵՍՈՒՆԵՒՄԷԿ ԱՐԹԻՔՈՒԼ

Տօ թէկօ աղաներուն խօնչան զա օպեվեսչենեմ, որտեղ օր բան վոյթ նազնաչրթ անէ, անտեղ բօվենեն ըլան կտրըճվորաք տալու, ինչպէս վերոյ դրեցաք։

ԵՐԵՍՈՒՆԵՒԵՐԿՈՒ ԱՐԹԻՔՈՒԼ

Զայս հաստատեմ վերջին արթիքուլ, որ առաջմէ վերոյ գրեալ կտրիճվորաց գանծանակին համար, որ ունենան տարի մէկ հեղ ուխտ անել՝ սուրբ Գրիգոր Լուսաւորչին օրն ամառնային, որ լինի տօն Գիւտ Նշխարաց։ Տօ թէկօ թէ որ ժողովուրդ ուզենան իրեանց կամօք մասնակից լինել այս ուխտին, թէտը բովինեն կլան կտրըճվորաքն իրենց տված ողորմութիւն կամ խուրպան ընդունել, տօլոժըդ կանեմ, որ թէ աստուած հասցնու, որ ուխտին ատենն գայ, բովինեն կլան կտրըճվորաքն երկու կամ երեք օր առաջ երթալ առ քահանայն իմ վէքիլին և երեսփոխանին, որ նոցա գիտութեան ծանուցումն անեն եկեղեցին մէջ, որ ժողովուրդ հաւասար իմանան, ուխտին օրն չաբաթին աւուրն։

Կատարեցաւ այս կօնտակս ի մայրաքաղաքն, որ կոչի Լով. ընդ հովանեաւ ննջման սուրբ Աստուածածնին, ի յաթոռանիստ տեղն, թվականին Հայոց ՌՃԷ (1658), փետրվարի ԺԸ (10), օրն Դ (4) շաբթի։

ՆԻԿՈԼԱՅՈՍ ԹՈՐՈՍԵՆՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԷՎԱ, ՔԱՄԷՅՈՑ
ԵՒ ՊՈՂՏԱՆԱՑ ԵՐԿՐԻ ՀԱՅՈՑ։

[կնիք]

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Արբօպվաք— (լեհ.) հաստատել, հավանություն տալ
Ագդա— (լեհ.) ակտ, արձանագրություն
Ա քըշ— (լեհ.) և նույնպես
Ալէ— (լեհ.) բայց; սակայն
Ախ— (ղիշաղերեն) պիտակ (դրամական միավոր)
Արդիֆոլ— (լեհ.) հոդված
Բան— (լեհ.) պան, պարոն, տեր
Բեալա— (թուրք.) գավաթ, բաժակ
Բէզ— (լեհ.) առանց
Բէրսոնալիդէր— (լեհ.) անձամբ
Բիյալա— տե՛ս բեալա
Բիսար— (լեհ.) գրագիր
Բոխառնայ— (լեհ.) շահ
Բոկորշենէ չառնուն—(լեհ.) վիրավորանք լսատանան
Բովինեն լինան— (լեհ.) պարտավոր լինեն

Բոտանը— (լեհ.) տրված, հանձնված
Բոտատ տրին— (լեհ.) տվին, հանձնեցին
Բոտրիսանը— (լեհ.) ստորագրված
Բոտուրատլը— (լեհ.) արհամարված, ոտնատակ եղած
Բորուչեանը— (լեհ.) հանձնարարված
Բրավնը— (լեհ.) օրինավոր
Բրինեաք— (լեհ.) ընդունել
Բուլուկան— (թուրք.) խմբովին
Բս— (լեհ.) նախդիր
Բսբրէպա լինա—(լեհ.) անհրաժեշտ լինի
Բսբրէպնը— (լեհ.) անհրաժեշտ
Բսզովանան— (ուկր.) կանչել
Բսովոլենեէ— (լեհ.) թույլտվություն
Բսվինէն լինայ— (լեհ.) մեղավոր լինի
Դէմպէն— (արաբ.) պատվիրել, հանձնարարել
Դէս շաս— (լեհ.) այդ ժամանակ
Դին— (թուրք.) կողմ
Դինաց— (թուրք.) կողմից
Նարաղ— (թուրք.) զենք
Զարոշանը— (լեհ.) հրավիրված լինել
Զարրիմաք անեն— (լեհ.) կանգնեցնեն
Զա նեէրոզլուժէնսվո—(լեհ.) չհնազանդվելու համար
Զասլուժիքսնա— (լեհ.) վաստակել
Զարուզ— (լեհ.) անմիջապես
Զարսոմազանեմ— (լեհ.) ըստ հրամանի
Զաոյեվեշչենեմ— (լեհ.) հաղորդել, բացատրել, զգուշացնել
Զաոպվեշչենեմ— տե՛ս Զաոյեվեշչենեմ
Զէպրանը— (լեհ.) հավաք, ժողով
Զրնան— (թուրք.) բանտ
Զլոթի— (լեհ.) զլոտի, դրամական միավոր
Զվրշայու— (լեհ.) սովորություն, ավանդույթ
Զուբելնը— (լեհ.) լրիվ
Զոլոթիյ— (լեհ.) տե՛ս Զլոթի
Էրֆ— (թուրք.) իրավունք
Թանէց— (լեհ.) պար
Թաֆժէ— (լեհ.) նույնպես
Թէզով— (թուրք.) շտապով
Թրլֆо— (լեհ.) միայն
Թո եսդ— (լեհ.) այսինքն
Թորա— (թուրք.) կարգ, կանոն
Թուրպովաք— (լեհ.) պահանջել
Խալբսել— (թուրք.) վերջանալ
Խարն— (արաբ.) ծախս
Խրզմէք— (արաբ.) ծառայել, սպասարկել
Խոնչա— (թուրք.) սփոռց (հյուրասիրություն)
Խուրպան— (արաբ.) մատաղ
Կարնեց— (լեհ.) չափի միավոր
Կելուր— (թուրք.) եկամուտ, մոտք
Կborա— (թուրք.) ըստ, համեմատ, համաձայն
Կorա— տե՛ս Կborա
Հալ— (արաբ.) վիճակ, դրություն
Հալալ— (արաբ.) արդար, օրինավոր
Հախ— (արաբ.) իրավունք
Հատիր— (արաբ.) ներկա
Հարսնեց— (լեհ.) մրցում, մարտ, ռազմական ընդհարում, կռիվ
Հեղ— (թուրք.) անգամ
Հէմ— (թուրք.) նաև
Հրոշ— (լեհ.) դրամական միավոր
Ճորով— (արաբ.) պարտադիր, հարկադիր
Ճուրում— (արաբ.) տուգանք
Մարշալէֆ— (լեհ.) մարշալոկ (վարչական պաշտոն հին Լեհաստանում)
Մլոտշը— (լեհ.) կրտսեր
Մոնր— (արաբ.) կնիք
Նարոմինադ անեն— (լեհ.) հիշեցնեն
Նազնաշրդ անեն— (լեհ.) նշանակեն
Նազնաշօնայ լինայ— (լեհ.) նշանակվի
Նա դէն շաս— (լեհ.) այն ժամանակ
Նալեժանցը— (լեհ.) պատկանել
Նայիմենէ— (լեհ.) հականե-հանվանե, անունանուն
Նաֆազաք— (լեհ.) պատժել
Նաֆլաք— (լեհ.) ծախս
Նեէրսոլուշնը— (լեհ.) անհնազանդ
Նեսախոնոնց— (լեհ.) չհեռանալով, ելքելով
Նաղաւաք— (արաբ.) խիղճ, բարեհոգություն
Նբարշիյ— տե՛ս սբարշը
Պաշխա— (թուրք., ղփչղ.) այլ, տարբեր, առանձին
Պաշխեշ անել— (պարսկ., ղփչղ.) նվեր տալ, ընծայել
Պաշխշ— (պարսկ., ղփչղ.) նվեր
Սանաք— (արաբ.) ժամ
Սրոֆոյնը— (լեհ.) հանգիստ
Սդարոսդա— (լեհ.) վարչական. պաշտոն հին Լեհաստանում
Սբարշը— (լեհ.) ավագ
Սուշ— (թուրք.) մեղք, սխալ, հանցանք
Սխացֆա— (լեհ.) հավաք, ժողով
Սֆարկա— տե՛ս սխացֆա
Սֆոյեսն վոլեսն— (լեհ.) իր կամքով
Վաժիցա չլինան— (լեհ.) երկար-բարակ չքաղվեն
Վարսվաք կանեմֆ— (լեհ.) կամրապնդենք, միհամաձայնեցնենք
Վրիսաք— (լեհ.) գրանցել, ցուցակագրել
Վենզեն—(լեհ.) բանտ
Վէֆիլ—(թուրք.) փոխանորդ, լիազոր, ներկայացուցիչ
Վրրիսաք անեն— (լեհ.) հեռացնեն, դուրս գրեն
Վոքում անեն— (լատ.) քվեարկեն
Վoքում— (լատ.) քվեարկություն
Վոլնը— (լեհ.) ազատ
Վոյք— (գերմ.) համայնքի ընտրովի առաջնորդ
Վոյվոտստ— (լեհ.) վարչական պաշտոն հին Լեհաստանում

Վլասնեէ— (լեհ.) սեփական
Վլասնը բուդբ— (լեհ.) սեփական, համապատասխան գրություն
Տեա ջեկո— տե՛ս Տլեա չեկо
Տէբուքաղներ—(լատ.) պատվիրակներ
Տէֆթէր— (արաբ.) մատյան
Տլեա չէկо— (լեհ.) ինչու համար
Տօբռօնտոռ— (լեհ.) ընտրված
Տօդեկո— (լեհ.) մինչ այնտեղ
Տօլօժրդ կանեմ— (լեհ.) կղեկուցեմ
Տօխօբ— (լեհ.) եկամուտ
Տօպուտօվանեա— (լեհ.) շինարարություն
Ֆոզմազար— (լեհ.) հրամայել, կարգադրել
Ֆռեօվրը— (լեհ.) բանակցել, խոստանալ
Քազեա— (արաբ.) գանձ, գանձատուն, շտեմարան
Քարաբ անեն— (լեհ.) պատժեն
Քառանբ լինեայ— (լեհ.) պատժվի
Քարա— (լեհ.) պատիժ
Քեֆիլտայ— (արաբ.) երաշխավորել
Օզկա— (ղփչղ.) ուրիշ
Օզնայմիք անել— (լեհ.) ծանուցել
Օպվինեսօն անեն— (լեհ.) մեղադրեն
Օվշէմ— (լեհ.) ընդհակառակը
Օրթլբխ— (թուրք.) ընկերակցություն
Ովսֆալոնբ— (լեհ.) գովաբանված
Ուսլուշնբ— (լեհ.) պատրաստակամ, ծառայակամ
Ֆուրման— (գեր.) սայլապան, կառապան

УСТАВ «БРАТСТВА УДАЛЬЦОВ» АРМЯНСКОЙ КОЛОНИИ ГОРОДА ЯЗЛОВЦА

В. Р. ГРИГОРЯН

Резюме

В 1895 г. библиотека конгрегации армянских католиков (Мхитаристов) в Вене получила в дар от львовского армянского архиепископа Саака Саакяна (Исак Исакович) небольшое собрание армянских рукописей, в числе которых был устав «Братства удальцов» армянской колонии города Язловца (ныне село Яблуновка Бучачского района Тернопольской области Укр. ССР). В том же 1895 г. в первом томе каталога армянских рукописей Вены было опубликовано описание этой рукописи. До этого были опубликованы уставы «Братств удальцов» некоторых армянских колоний Молдавии, в совокупности с которыми язловецкий устав мог быть полезным в деле изучения истории этих интересных организаций.

Братства эти являлись своеобразными городскими организациями, целью которых было объединение армянской молодежи на основе взаимной помощи, стремление способствовать их духовному воспитанию.

Начало научному изучению истории братств удальцов было положено недавно, когда были опубликованы статья Л. С. Хачикяна о братстве, организованном в XIII в. в городе Ерзынка, а также устав этой организации (написанный в 1280 г.), подготовленный к печати тем же автором. Сопоставление материалов показывает, что братства, организованные в колониях, имеют большое сходство как друг с другом, так и с идентичной организацией города Ерзынка. В XII в. во многих городах Армении существовали подобные «Братства удальцов», сохранившие свое существование и в последующий период. Переселившись в страны Восточной Европы, армяне, наряду с другими национальными обычаями и традициями, сохранили и эти организации, претерпевшие, однако, некоторые изменения в новых условиях. В XIV в. в армянских колониях

Крыма действовало «Братство удальцов» и, очевидно, оттуда же оно распространилось на Украину. Первое упоминание об организации армянской молодежи в Каменце-Подольском относится к 1522 г. Время возникновения «Братства удальцов» в городе Язловце нам неизвестно. Когда в 1627 г. сюда прибывает армянский католикос Мелькиседек, среди представившихся ему были также армянские удальцы и их руководители. Сохранилось послание католикоса язловецким армянским удальцам (10 февраля 1627 г.).

Публикуемый впервые устав армянского «Братства удальцов» Язловца является ценным первоисточником не только по изучению данной организации, ее структуры, но и всей колонии, ее руководящих органов и т. д. Устав был написан в 1646 г. и утвержден архиепископом Николом Торосовичем в 1658 г., состоит из 32 статей, в которых подробно разъяснены права и обязанности членов братства. Как в Ерзынка и в других городах, так и в Язловце молодежные братства не были связаны с ремеслами. Это была частично военизированная организация, в задачи которой, помимо религиозно-духовного воспитания юношей, входило также привитие молодежи дисциплинированности, навыков беспрекословного повиновения старшинам, готовности при необходимости выйти на борьбу с врагами. Известно, что язловецкие армяне принимали активное участие в обороне города. «Братство удальцов», несомненно, сыграло важную роль в деле воспитания боевого духа армянской молодежи.

К публикуемому тексту устава предпослано соответствующее вступление, в приложении дан перевод встречающихся в тексте иностранных (в большинстве польских, арабских и турецких) слов.